



0025, Կորյունի 2, ք.Երևան, ՀՀ

հեռ.+37411621000

rectorat@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
21-ի N35 ՆԻՍՏՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

21.10.2019թ.

«Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) ղեկավարատը որոշում է հավանություն տալ.

1. Հավանություն տալ անվանական կրթաթոշակի ութ հավակնորդներին գիտական խորհրդին ներկայացնելու առաջարկին: (ցուցակը կցվում է) (որոշում N 19-10-35-01).
2. Հավանություն տալ մեկ ուսանողի մեծաթիվ անհարգելի բացակայությունների հիմքով՝ նախազգուշացում հայտարարելու առաջարկին (տվյալները կցվում են) (որոշում N 19-10-35-02).
3. Հավանություն տալ ընդհանուր բժշկության ֆակուլտետի 3-րդ կուրսի մեկ ուսանողի ուսման վճարի 60 տոկոսը ԵՊԲՀ միջոցների հաշվին փոխհատուցելու առաջարկին՝ հաշվի առնելով ուսանողի 2018-2019թթ ուսումնական տարվա փոխատեղման մրցույթի արդյունքները, առկա ծրագրային տարբերությունները և ամբողջ ուսումնառության համար



սահմանված ուսման վճարի զեղչը (40 տոկոս): (տվյալները կցվում են) (որոշում N 19-10-35-03).

4. Հավանություն տալ ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանին 01.11.2019թ-ից մինչև 11.11.2019թ-ը ներառյալ (յոթ աշխատանքային օր) ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաք գործուղելու առաջարկին՝ ԵՊԲՀ շրջանավարտների միության և բարերարների հետ բարեգործական նպատակներով ճաշին և համապատասխան հանդիպումներին մասնակցելու նպատակով: (որոշում N 19-10-35-04).
5. Հավանություն տալ ընտանեկան ստոմատոլոգիա մասնագիտության 2-րդ տարվա կլինիկական օրդինատորներ Անահիտ Աշոտի Մկրտչյանին և Մարինե Վոլոդյայի Հարությունյանին ուսման վարձի 50 տոկոսի չափով զեղչ տրամադրելու առաջարկներին (ցուցակը կցվում է) (որոշում N 19-10-35-05).

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ա. Մուրադյան

Ա. Արսենյան